Բաց նամակ
Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար պրն. Վ. Օսկանյանին

ք.Երեւան,
11 սեպտեմբերի 2006թ.

Մեծարգո պրն. Նախարար

2006 թվականի օգոստոսի 17-ին Հայրենադարձության եւ հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միությունը գրավոր դիմել էր Հայաստան-Սփյուռք 3-րդ Համահայկական Խորհրդաժողովի կազմակերպման հարցերը համակարգող ԱԳՆ աշխատակցին մեր կազմակերպության ներկայացուցչին հայրենադարձությանը նվիրված համապատասխան նիստում զեկույց ունեցողների կազմում ընդգրկելու առաջարկով:

Որպես դիմումի հիմնավորում մեր կողմից նշվում էին այն իրողությունը, որ «Երկիր» միությունը, հայրենադարձության կազմակերպումը համարելով Հայաստանի զարգացման հիմնարար երաշխիքներից մեկը, դեռեւս 2005 թվականի սեպտեմբերից, այսինքն՝ մինչեւ ՀՀ նոր Սահմանադրության հանրաքվեի անցկացումը, աշխատել է հայրենադարձության կազմակերպման եւ այդ նպատակով համապատասխան օրենքի ընդունման անհրաժեշտության գաղափարի քարոզչության ուղղությամբ: Այսպես, մեր կողմից մշակվել եւ պետական համապատասխան մարմինների ու հանրության ուշադրությանն է ներկայացվել «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագիծ, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հետ համատեղ կազմակերպվել են սեմինարներ հայտնի փորձագետների մասնակցությամբ, հրավիրվել են մամլո ասուլիսներ, 2006 թվականի ապրիլին հրատարակվել է «ԴԵՊԻ ԱՐԱՐԱՏ» հայրենադարձության ազգային ծրագիրը՝ Հայաստանի զարգացման հիմնարար պայման» գրքույկը եւ այլն: Նամակում ասված էր, որ հայրենադարձության գաղափարի կանոնակարգման ուղիների ուսումնասիրության ուղղությամբ մեր կազմակերպության կողմից առայժմ կատարած աշխատանքը մեզ հիմք է տալիս խորհելու, թե արդեն կուտակել ենք բավարար փորձ, որը կարող է օգտակար լինել Խորհրդաժողովում տվյալ հարցի շուրջ քննարկումների ընթացքում:

Սակայն, մեր դիմումը մերժվեց: Որպես մերժման հիմք մատնանշվեց այն հանգամանքը, որ, իբր, առաջին՝ Խորհրդաժողովում խոսքը գնալու է հիմնականում Հայրենադարձության պատմական դրսեւորումների մասին, եւ, երկրորդ՝ այդ հարցով զեկուցողներն արդեն իսկ որոշված են: Ելույթի մերժման փաստը եւ դրա հիմքերն ամրագրող գրավոր փաստաթուղթ ստանալու մեր կազմակերպության պահանջը մնաց անպատասխան...:

Ինչեւէ, այս մերժումն սպասելի էր, հաշվի առնելով այն իրողությունը, որ դեռեւս 2005 թվականի նոյեմբերի 25-ին ԱԳՆ-ը մերժել էր «Հայրենադարձության մասին օրենքի» նախագիծը, որը մեր կազմակերպությունը ներկայացրել էր ՀՀ Ազգային ժողով, իսկ այնտեղից ուղարկվել էր Ձեր ղեկավարած գերատեսչությանն ու այլ նախարարությունների կարծիք հայտնելու նպատակով: Ձեր կողմից ղեկավարվող գերատեսչությունը նշում էր, որ, մեջբերում ենք. «Հայաստանի Հանրապետությունը նույնիսկ նման օրենքի բացակայության պարագայում վարում է ծագումով հայերի համար առանց որեւէ խոչընդոտի Հայաստանի Հանրապետություն մուտք գործելն ապահովելու եւ...նրանց համապատասխան կացության կարգավիճակ տրամադրելու քաղաքականություն, եւ դրա համար պետության գործող օրենսդրությունն ապահովում է համապատասխան իրավական հիմքեր»: ԱԳՆ-ը նաեւ գտնում էր, որ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների ընդունման դեպքում «եթե անհրաժեշտություն առաջանա մշակել «Երկքաղաքացիության մասին» օրենքի նախագիծ, ներկայացված

նախագծի (այսինքն՝ «Հայրենադարձության մասին» օրենքի) անհրաժեշտություն այլեւս չի լինի, քանի որ նշված օրենքով կկարգավորվեն ներկայացված նախագծով սահմանված գրեթե բոլոր հարցերը»:

Սակայն այս մերժումը մեզ այժմ տարօրինակ է թվում հատկապես այն իրողության լույսով, որ Դուք՝ պրն Նախարար, արդեն այս տարի, Հայաստան-Սփյուռք 3-րդ Համահայկական Խորհրդաժողովի նախօրյակին, Ձեր ելույթներումեւ հարցազրույցներում կողմ եք արտահայտվում հայրենադարձության գործընթացների կանոնակարգման օգտին: Ֆրանսական մի թերթում վերջերս եք Դուք հայտարարել, թե այսօր Հայաստանի պետությունը զուրկ է հայրենադարձության քաղաքականությունից: Դուք նաեւ նշում էիք, որ չկա այս հարցը կարգավորող օրենք եւ նման տեքստի հնարավորությունը թերեւս լուրջ քննարկումների առիթ չի ստեղծել եւ, որ այս հարցը, առաջին անգամ կքննարկվի համաժողովի ընթացքում (Les Nouvelles d’Armenie Magazine, № 122, Սեպտեմբեր, 2006):

Փաստորեն, տպավորություն է ստեղծվում, որ Ձեր իրական քայլերը հակասում են հայրենադարձության օգտին մամուլում Ձեր հնչեցրած ելույթներին: Ըստ երեւույթին, դրանով կարելի է բացատրել, թե ինչու «Երկիր» միությանը հնարավորություն չի տրվում Հայաստան-Սփյուռք 3-րդ Համահայկական Խորհրդաժողովի մասնակիցներին ներկայացնել Հայրենադարձության գործընթաց ծավալելու ուղղությամբ գործնական միջոցառումների իր ծրագիրը:

Մեծարգո պրն Նախարար, ավարտելով նամակը, խնդրում ենք պարզաբանել հետեւյալ հարցերը.

1. Ո՞րն է Ձեր պաշտոնական դիրքորոշումը Հայրենադարձության երեւույթի, եւ, մասնավորապես, ներկայումս Հայրենադարձության պետական քաղաքականության իրականացման վերաբերյալ:

2. Ի՞նչ գործնական քայլեր պետք է ձեռնարկեն Հայաստանի Հանրապետության իշխանությունները Հայրենադարձության գործընթացի կանոնակարգման ուղղությամբ:

Ելույթի իրավունքից զրկված լինելով՝ առանց այս հարցերի պատասխաններն ունենալու Հայրենադարձության եւ հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակրպությունների միությունը տեղին չի համարում իր մասնակցությունը Հայաստան-Սփյուռք 3-րդ Համահայկական Խորհրդաժողովին:

Հարգանքներով՝

Հայրենադարձության եւ հիմնավորման
«Երկիր»
հասարակական կազմակերպությունների միություն